

ղաւ . անոր համար պէտք եղաւ որ Զանայ՝ քիթը բռնէ , երբոր աշկերտները նորէն չուանը երկնցուցին ու առաջինէն աւելի մտադրութեամբ սկսան վեր քաշել . բայց դժբաղդութեամբ հազիւ թէ՛ Վասրէտտին ջրհորին կէսը կը հասնի , ինքզինքը չկրնալով բռնել՝ նորէն փռնդտալ մը փախաւ . աշակերտները գրեթէ իրենց կամացը դէմ չուանը ձեռքերնէն թողլով՝ առջի քաղաքաւաւրութեան ծափահար հանդէսը կատարեցին . որուն շնորհքովը՝ երրորդ անգամ վարպետին վեր քաշելով , կէս ջախջախած դուրս ելաւ : Ինկէ ետեւ կարծեմ մէկու մ' ալ թողուցած պիտի չըլլայ՝ Վասրէտտին խօճայն որ իր փռնդտալուն ծափ զարնէն կամ քաղաքաւաւրական ձևեր ու ձայներ հանեն :

ԱՌԱԿ

Ժանդանային բռնած ինքանիներ :

Հարուած մ' ուսկից աշխարհք ամէն կը դողայ , Յաւ , զոր ցատուսն երկնից թափեց մեր վերայ երկրիս ըրած չարիքները պատժելով . Ժանտախան , ըսեմ յայտնի իրեն անուշով , Որ մէկ օրը կըրնայ դժոխք լեցնել , Անանոց դէմ պատերազմի էր ելեր : Ամենք չէին մեռներ , ամենքն այլ աղկար՝ Զինքն հոգացող մէկն ալ չըկար , Որ մեռնէէն խալըսելու ճար փրկուէր . Ինչ համով կերն ալ անորժնին չէր շարժեր . Ոչ գայլն ոչ աղուէս ալ աչք չունէին Դիտելու անուշ ու սուրբ աւարնին . Տատրակ տատրակէ հեռու կը փախչէր . Ո՛ւր ուրախութիւն՝ երբ կը պակսի սէր : Ժողովք կանչեց առիւծն ըսաւ . Սիրելիք , Կարծեմ պատիժ աս մեր մեղքին որ երկինք Այսչափ չարիք թողուց գալու վերանիս . Թող ամենէն յանցաւորը մէջերնիս Երկնից ցամառն ինքնանըւէր զոհ ըլլայ . Գուցէ եղբարցն առողջութիւնը գըտնայ : Հին պատմութիւնը կ'աւանդէ թէ շատեր Ասանկ ատեն իրենք զիրենք են զոհեր . 'Նայինք ուրեմն , (այլ չըլլայ թէ մեզ խաբենք) , Խիչձերնիս ինչ ջուրի վերայ կը գըտնենք :

Ինծի գալով՝ իմաս շատ հեզու ոչխարներ Ողջ ողջ պատուեր լափեր անկուշտ եմ կերեր . Մեղք , անմեղներն ինձ ինչ վընաս են տըւեր : Երբեմն անոնց հետ ալ սանկ փորս եմ նետեր

Հովիւներ :

Բանն ասանկ է . զոհ պէտք է նէ՛ կեցեր եմ . Բայց ամենքն ալ խոտովանին նախ՝ կարծեմ . Որպէս զի ճիշդ արդարութիւն կատարուի , Էն մեղաւորը մէջերնուս կորսուի :

Տէր իմ , ըսաւ աղուէսն , ո՛վ լաւ թագաւոր , Շատ փափուկ է քու խրդամոտեքդ իրաւ որ . Ի՞նչ , մէկ քանի անմիտ ոչխար ուտելով

Մեղք մի ըրիր . չէ , մանաւանդ

Պատիւ անոնց՝ փորիդ մէջը պահելով :

Հովիւներն ըսես նէ՛ աւելի

Անոնք են պատժելու արժանի .

Անոնք են անըզգամ այն ցեղէն ,

Որ զիրենք մեզի տէր կը կարծեն :

Աս որ ըսաւ աղուէսն , ամենք ծափ զարկին .

Անկէց ետեւ ոչ ոք բընաւ սիրտ չըրին

Վագրին , արջուն ու դազանաց ահարկու

Պարտապանաց մեղքերը խոր քըննելու .

Այն կատաղի կըռուովներէն ինչուան շուն

Մէյմէկ պըզտի սուրբ կը կարծես ըսածնուն :

Կարգը իշուն գալով՝ մէջ տեղն երբ եկաւ ,

Միտքըս կու գայ որ , ըսաւ ,

Օր մը դիմացս արօտ մ' ելաւ բերնիս մօտ .

Քաղցն էր ըսեմ , առիթն յարմար , թէ լաւ խոտ ,

Քիչ մ' ալ կարծեմ իս սատանան փորձեց հոտ ,

Զըգիմացայ ,

Լանկեկ լեզուս պըտըացուցի որչափ կըրցայ ,

Խըլէցի խոտն . ի՞նչ սուտ ըսեմ , մեղայ մեղայ :

Խօսքը բերանն էր դեռ , ամենքը պոռացին միաբան .

Քեզի պէս այ անըզգամ .

Ճարտարախօս գայլ մը ճառեց ցուցուց հոն

Թէ անիծած էշն էր արժան զոհուելուն ,

Այն վատ անարգ չարեացապարտ կենդանին :

Պըզտափի մեղքը խեղճ էշին

Կախնոցի մեղք մը սեպուեցաւ ահագին .

Ի՞նչ ըսեւ է ուրիշին խօսը ուտել .

Մահը միայն բաւական է , պոռացին ,

Իր ատ եղեւնը ջընջել :

Ու գործքով ալ կատարեցին ըսածնին :

Զօրաւոր կամ տըկար ըլլալուդ համեմատ՝

Դատաւորք քեզ կ'ընեն պարտաւոր կամ անպարտ :

ԼԱՅՈՒՆԻՆ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ